ԱՐՇԱԼՈՅՍ ԶՄԻՐՆԻԱՅ

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՐՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՐՆԻԱ ՇԱԲԱԹ Ի ՓԵՏՐՎԱՐ 1897 ԹԻՒ 1059

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անակնկալ և ծանր դէպք մի հասարակութեան ուշադրութիւնը [illegible] կը կեդրոնացնէ յերկուց շաբաթուց հետէ։ Մեծ—Եպարգոս Միհրան փաշան՝ որ հայրենասիրութեան, ազատասիրութեան և ամբոխութեան անձնաւորութիւնն համարուած էր, [illegible] և շարաչար դաւադրութեամբ մը յանցաւոր գտնուեցաւ ընդդէմ նուիրական անձին Սուլթան Համիտ կայսեր. զոր կուզէր դահընկեց [illegible], որպէսզի իրրև դիկտատոր իւր ձեռքն առնու զկառավարութիւն բարձրագոյն իշխանութեան ընդ անուանական վեհապետութիւնն մի միայ՝ որ արդէն մեռեալ է իմացական գործողութեամբ։

Միհրան փաշային այս ծանր յանցանքն ապացուցուելով նախարարաց արտաքոյ կարգի դատարանի մէջ՝ յատկապէս գումարելոյ 'ի կայսերական պալատն, մահուան դատապարտեցաւ։ Այդ օգոստափառ Սուլթանն՝ որոյ զմարդասիրական գթութիւնն խնդրած էր դատապարտեալն, չնորհ ըրաւ յօտար երկիր արտաքսել [illegible] մնանելենաւոր կերպիւ։ Ուստի նախորդ Մեծ—Եպարգոսն՝ օսմանեան պատերազմական գեղեցիկ յուշարկեցաւ 'ի Պրինտիսի քաղաքն Իտալիոյ, ուր՝ արդէն հասած է։ Իսկ Մեծ—Եպարգոսութեան բարձր պաշտօնն՝ կայսերական [illegible] յանձնեցաւ Պէրլինի նախորդ դեսպան բարձրա. Լթհէմ փաշային՝ որ կենալ [illegible] զադէտ, խոհական անձ մըն է և դիւանագիտական կատարեալ հմտութիւն ունի. որով սիրելի յոյժ եղև յայս Գերմանիս կայսերական կառավարութեան։

Ահաւասիկ նորընտիր Մեծ—Եպարգոսին ուղղեալ խաթթի—Հիւմայունը, որ կարևոր պաշտօնաբաշխութիւններ և բարձրաստիճան պաշտօնակալաց փոփոխութիւններ կը պարունակէ և ըստ բաղումս մասանց ուշադրութեամբ ընթեռնելոյ արժանի է։

«Իմ մեծաշուք Վէզիրս Լթհէմ փաշա (1)

«Ժամանակիս պիտոյքն և մեր տերութեան նոր կացութիւնը նկատողութեան առնելով, մեր յօժար կամքը Սահմանադրութիւն հաստատեցինք, որ իւր օգտակար արդեամբքն ամենուն յարգանք և վստահութիւն պէտք է ազդէ և մեր երկրին փրկութիւնն ապահովէ։

«Այս նպատակին իրացումը մեկ կողմէ կախում ունի տերութեան ամեն ատիճանի պաշտօնատարաց ընթացքէն, որք պարտին բնաւ չզարտուղիլ իրենց պարտականութեանց սահմանէն և օրինաց տրամադրութիւններէն, միւս կողմէ մեր ամեն կարգի հպատակաց համար հրատարակեալ հաւասարութեան սկզբունքն անվթար պահելու համար հարկ եղած ամեն միջոցներուն անկեղծաբար գործադրութենէն։

«Հետևաբար այդ միջոցները գործադրելու պաշտօն ունեցող նախարարաց և վարչական պաշտօնէից մէջ կարևոր փոփոխութիւնք հարմարելք են ըստ աշխարհաբառի իւրում, համարի վրիպեալ ի տեսութենէ ճշմարիտ դրագիտաց, և կամ ի մի կշիռ չափել զամենայն այր ուսումնական՝ աշակերտեալ փոքր ի շատէ ազգային դպրութեան։

Նախ, ի սկիզբն անդ բանից իւրոց, Ա. ՄԱՄՈՒԼՆ, ի հաստատութիւն նախադատութեան իւրոյ, առ ի կանխակալել զմիտս ընթերցողաց իւրոց, ի վկայութիւն ածէ բանս ինչ ի գրոց պատմութեան խորենացւոյն առանց զբնագիրն ի մէջ բերելոյ. ասէ՝ եթէ նախնիք մեր չիցեն բնաւ խօսեալ զգրոց բարբառն, յոր լեզու թարգմանեալ համարի մեծագոյն մասամբ ընդ թարգմանութիւնսն, այլ թէ՝ այլով լեզուաւ, տարբեր ի գրաբառէն՝ խօսէր հասարակ ժողովուրդն։ Իսկ բանք խորենացւոյն են այս «Զրուցեցեալ քեզ անսխալ. . . հասարակաց խօսիւք անցանելով ընդ պատմութիւնս''։ Հասարակաց խօսելով պատմիչն մեր ոչ իմանայ տարբեր և այլազան բարբառ, զոյ շարամանութիւնք բառիցն սեփական իցէ ինքեան, առանձին ունելով իւր քերականական կանոնս, այլ թէ անզարդ և պարզ խօսիւք կամի պատմագրել ըստ բաւական հասկացողութեան հասարակաց. և այս յայտ է ի հետագոյ բանիցն զոր ի վերայ ածէ. «որպէսզի մի՛ ոք, ասէ, երևեսցի ի պերճաբանութիւն գրաւեալ առ փափագն''. (Գիրք Գ. 1)։ Ուրեմն առ ի խուսել ի սեթևեթեալոճոյ որ մթագնեն զիմացուած բանիցն, խօսի պարզ բանիւք, հասարակաց լեզուաւ, որ նոյն ինքն է զոր մեք այժմ գրաբառ անուանեմք։

Հարցանեմ ցԱ. ՄԱՄՈՒԼՆ. զի՞նչ զանազանութիւն գտանէ ի մասին ոճոյ և կանոնաց ընդ թարգմանութիւնսն այնոսիկ, յորս գլխաւորապէս իմանի անշուշտ սուրբ Գիրքն և ճառք Ոսկեբերանի, և մեծի Դաւթի երկքն ընդ գիրս պատմութեան խորենացւոյն, յորոց զառաջինն գրոց լեզու համարի, իսկ զերկրորդն՝ հասարակաց, այն է աշխարհաբառն։ Եթէ չիցէ նա առատակ խառիր դնել ընդ մէջ երկուցն, շնորհեմ զամենայն կուսակիցս իւր զվատագոյս աշխարհաբառին ի խորհուրդ կոչել առ ի տալ զլուծումն խնդրոյս, և հաստատել՝ եթէ սուրբ Գիրքն գրեալ իցեն գրաբառ լեզուաւ, իսկ պատմագրութիւնն խորենացւոյն ի լեզու աշխարհիկ։ Ծերունիս այս խորենեան, թերևս հասարակ խօսք՝ ասելով՝ ակնարկէ ի միւս այլ երկասիրութիւն իւր, այն է Գիրքն Պիտոյից գրեալ ոչ տարբեր կանոնօք, այլ պերճաբան լեզուաւ ըստ յատուկ փափագանաց իւրոց, որ մեծաւ մասամբ անհասկանալի էր հասարակաց, անուս և անդրագէտ ժողովրդեան։

Բ. ԱՐ. ՄԱՄՈՒԼՆ համարի, առանց յենլոյ ի հաստատուն վկայութիւն ուրուք, թէ ի ժամանակս ոսկեդարուն գտանէին այլևայլ բարբառք գաւառականք, յորոց, ասէ, սերեալ արդի աշխարհաբառն։ Հակասութիւն մեծ է ի բանիս, որ ոչ բերէ պատիւ ուղիղ տրամաբանութեան։ Ի սկիզբն բանիցն ցոյց նա, թէ Մովսէս խորենացի գրեաց զպատմութիւն իւր ի լեզու աշխարհաբառ դարուն այնորիկ. և ասասէ, եթէ արդի աշխարհիկ լեզուն ծնունդ իցէ այնմ։ Արդ, ցուցցէ մեզ զի՞նչ նմանութիւն կայցէ ի մէջ լեզուի և ոճոյ գրոց պատմութեան խորենոյ, և ի մէջ խօսուն լեզուիս մերոյ այժմեան, զոր բուն հայերէն վարկանի։ Այլ առ ի հաւանեցուցանել և ևս զաշխարհաբառամոլն, եթէ առ խորենացւով ոչ գոյր այլ լեզու առանձին խօսեալ ի հասարակաց տարբեր քան զգրաւոր լեզուն, յուշ ի կուրծս առնեմ նոցա զհին աւուրց երդսն զոր ցայնժամերդէին ընակիչքն Գողթնայ, որ էին անշուշտ գիւրհասկանալի ամենայն ումեք. որպիսի են զՍաթինկայ երգքն։ «Այլև տենչայ Սաթինիկ տենչանս՝ զարտախուր խաւարտ և զտիժ խաւարժի ի բարձիցն Արդուանայ. Ա. 30)։ Դարձեալ երգքն որ զԱրտաշիսէ, այն է՝ «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ''. (Բ. 50)։ Անդ դարձեալ զԱրտաւազդայ. «Մինչ գու գնացեր և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար. ես ա-

---

դեսպան բարձրա. Լթհէմ փաշային՝ որ կենալ [illegible] զադէտ, խոհական անձ մըն է և դիւանագիտական կատարեալ հմտութիւն ունի. որով սիրելի յոյժ եղև յայս Գերմանիս կայսերական կառավարութեան։

Ահաւասիկ նորընտիր Մեծ—Եպարգոսին ուղղեալ խաթթի—Հիւմայունը, որ կարևոր պաշտօնաբաշխութիւններ և բարձրաստիճան պաշտօնակալաց փոփոխութիւններ կը պարունակէ և ըստ բաղումս մասանց ուշադրութեամբ ընթեռնելոյ արժանի է։

«Իմ մեծաշուք Վէզիրս Լթհէմ փաշա (1)

«Ժամանակիս պիտոյքն և մեր տերութեան նոր կացութիւնը նկատողութեան առնելով, մեր յօժար կամքը Սահմանադրութիւն հաստատեցինք, որ իւր օգտակար արդեամբքն ամենուն յարգանք և վստահութիւն պէտք է ազդէ և մեր երկրին փրկութիւնն ապահովէ։

«Այս նպատակին իրացումը մեկ կողմէ կախում ունի տերութեան ամեն ատիճանի պաշտօնատարաց ընթացքէն, որք պարտին բնաւ չզարտուղիլ իրենց պարտականութեանց սահմանէն և օրինաց տրամադրութիւններէն, միւս կողմէ մեր ամեն կարգի հպատակաց համար հրատարակեալ հաւասարութեան սկզբունքն անվթար պահելու համար հարկ եղած ամեն միջոցներուն անկեղծաբար գործադրութենէն։

«Հետևաբար այդ միջոցները գործադրելու պաշտօն ունեցող նախարարաց և վարչական պաշտօնէից մէջ կարևոր փոփոխութիւնք հարմարելք են ըստ աշխարհաբառի իւրում, համարի վրիպեալ ի տեսութենէ ճշմարիտ դրագիտաց, և կամ ի մի կշիռ չափել զամենայն այր ուսումնական՝ աշակերտեալ փոքր ի շատէ ազգային դպրութեան։

Նախ, ի սկիզբն անդ բանից իւրոց, Ա. ՄԱՄՈՒԼՆ, ի հաստատութիւն նախադատութեան իւրոյ, առ ի կանխակալել զմիտս ընթերցողաց իւրոց, ի վկայութիւն ածէ բանս ինչ ի գրոց պատմութեան խորենացւոյն առանց զբնագիրն ի մէջ բերելոյ. ասէ՝ եթէ նախնիք մեր չիցեն բնաւ խօսեալ զգրոց բարբառն, յոր լեզու թարգմանեալ համարի մեծագոյն մասամբ ընդ թարգմանութիւնսն, այլ թէ՝ այլով լեզուաւ, տարբեր ի գրաբառէն՝ խօսէր հասարակաց ժողովուրդն։ Իսկ բանք խորենացւոյն են այս «Զրուցեցեալ քեզ անսխալ. . . հասարակաց խօսիւք անցանելով ընդ պատմութիւնս''։ Հասարակաց խօսելով պատմիչն մեր ոչ իմանայ տարբեր և այլազան բարբառ, զոյ շարամանութիւնք բառիցն սեփական իցէ ինքեան, առանձին ունելով իւր քերականական կանոնս, այլ թէ անզարդ և պարզ խօսիւք կամի պատմագրել ըստ բաւական հասկացողութեան հասարակաց. և այս յայտ է ի հետագոյ բանիցն զոր ի վերայ ածէ. «որպէսզի մի՛ ոք, ասէ, երևեսցի ի պերճաբանութիւն գրաւեալ առ փափագն''. (Գիրք Գ. 1)։ Ուրեմն առ ի խուսել ի սեթևեթեալոճոյ որ մթագնեն զիմացուած բանիցն, խօսի պարզ բանիւք, հասարակաց լեզուաւ, որ նոյն ինքն է զոր մեք այժմ գրաբառ անուանեմք։

Հարցանեմ ցԱ. ՄԱՄՈՒԼՆ. զի՞նչ զանազանութիւն գտանէ ի մասին ոճոյ և կանոնաց ընդ թարգմանութիւնսն այնոսիկ, յորս գլխաւորապէս իմանի անշուշտ սուրբ Գիրքն և ճառք Ոսկեբերանի, և մեծի Դաւթի երկքն ընդ գիրս պատմութեան խորենացւոյն, յորոց զառաջինն գրոց լեզու համարի, իսկ զերկրորդն՝ հասարակաց, այն է աշխարհաբառն։ Եթէ չիցէ նա առատակ խառիր դնել ընդ մէջ երկուցն, շնորհեմ զամենայն կուսակիցս իւր զվատագոյս աշխարհաբառին ի խորհուրդ կոչել առ ի տալ զլուծումն խնդրոյս, և հաստատել՝ եթէ սուրբ Գիրքն գրեալ իցեն գրաբառ լեզուաւ, իսկ պատմագրութիւնն խորենացւոյն ի լեզու աշխարհիկ։ Ծերունիս այս խորենեան, թերևս հասարակ խօսք՝ ասելով՝ ակնարկէ ի միւս այլ երկասիրութիւն իւր, այն է Գիրքն Պիտոյից գրեալ ոչ տարբեր կանոնօք, այլ պերճաբան լեզուաւ ըստ յատուկ փափագանաց իւրոց, որ մեծաւ մասամբ անհասկանալի էր հասարակաց, անուս և անդրագէտ ժողովրդեան։

Բ. ԱՐ. ՄԱՄՈՒԼՆ համարի, առանց յենլոյ ի հաստատուն վկայութիւն ուրուք, թէ ի ժամանակս ոսկեդարուն գտանէին այլևայլ բարբառք գաւառականք, յորոց, ասէ, սերեալ արդի աշխարհաբառն։ Հակասութիւն մեծ է ի բանիս, որ ոչ բերէ պատիւ ուղիղ տրամաբանութեան։ Ի սկիզբն բանիցն ցոյց նա, թէ Մովսէս խորենացի գրեաց զպատմութիւն իւր ի լեզու աշխարհաբառ դարուն այնորիկ. և ասասէ, եթէ արդի աշխարհիկ լեզուն ծնունդ իցէ այնմ։ Արդ, ցուցցէ մեզ զի՞նչ նմանութիւն կայցէ ի մէջ լեզուի և ոճոյ գրոց պատմութեան խորենոյ, և ի մէջ խօսուն լեզուիս մերոյ այժմեան, զոր բուն հայերէն վարկանի։ Այլ առ ի հաւանեցուցանել և ևս զաշխարհաբառամոլն, եթէ առ խորենացւով ոչ գոյր այլ լեզու առանձին խօսեալ ի հասարակաց տարբեր քան զգրաւոր լեզուն, յուշ ի կուրծս առնեմ նոցա զհին աւուրց երդսն զոր ցայնժամերդէին ընակիչքն Գողթնայ, որ էին անշուշտ գիւրհասկանալի ամենայն ումեք. որպիսի են զՍաթինկայ երգքն։ «Այլև տենչայ Սաթինիկ տենչանս՝ զարտախուր խաւարտ և զտիժ խաւարժի ի բարձիցն Արդուանայ. Ա. 30)։ Դարձեալ երգքն որ զԱրտաշիսէ, այն է՝ «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ''. (Բ. 50)։ Անդ դարձեալ զԱրտաւազդայ. «Մինչ գու գնացեր և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար. ես ա-

---

(1) ՄԱՍԻՍԷՆ կը քաղեմք այս թարգմանութիւնը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՋՈՏԱԳՈՎԼՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌԻ(1)

Զթիւ 1056 պատուական ԱՐՇԱԼՈՒՍՈՑՆ ընթերցայ, յորումէր և այն կարևոր խնդիր՝ գրաբառի և աշխարհաբառի. առ նմին գտի և ըստ մտալից յօդուած պարոն Նշան Միրզայի, որ ունէր խօսս ընդդէմ բանից ԱՐԵԼԵԱՆ ՄԱՄԼՈՑ զատագողութիւն գրաբառիս։ Նախ շնորհաւորեմ զմեզ յիշեալ նորահասակ դրագիտի իւրական ասպարէզ ազգային հանդիսից, և խնդրեմ ի նորին սիրելութենէն յարատևել ի նմին չաւղի, փայլեցուցանել զանճաբ իւր ժառանգական, այլ այնու բարբառով՝ զոր պաշտպանեաց հայր իւր, և առաւել քան զնա երջանկայիշատակ հաւն իւր տէր Յովհան վանանդեցի, այլն ճշմարտիկ, և հանճարով և գրաւական արդեամբք հռչակեալ։ Կարդաւորեալ և զօրաւոր բանիւք ցուցանէր գրագէտն մեր ճշմարտատուութիւն գրաբառ լեզուիս քան աշխարհիկն, և զանհրաժեշտ կարևորութիւն ասման նորին յազգային վարժարանս և յամենայն դասարանս։ Համամիտ եմք ևս նմին և զարմ ի ստատգով հնոյ լեզուիս, որ միակ առանձին կազմէ զՀայկեան դրականութիւն և զդպրութիւն, որ ունի իւր կանոնս հիմնականս, զոր գիւրագոյն գործի ուսումն նորին։

Ինձ ոչ այլ ինչ մնայ յառաջ բերել ասա ի հաստատութիւն բանից Միրզայի, բայց եթէ գիտողութիւնս ինչ, զոր թերևս Ա. ՄԱՄՈՒԼՆ, կարծելով խօսել այնոցիկ ևեթ՝ որք իբրև զնա

---

(1) Այս ամենապատուական եւ իմաստալից յօդուածն, որմէ յիշատակուիլն արարեալ եմք մեր նախընթաց թուով, աշխատասիրեալ է 'ի պատուելի Տիգրանեանց Թ. Սալավանեանց, 'ի բազմամուտ հեղինակեանց Ս. Գարագաշեան Պատմութեան Ս. Երուսաղեմի, շարադրեալ 'ի պարզ գրաբառ լեզու, որ տակաւին ոչ ընծայեալ 'ի լոյս։

տական խորհրդոյ նախագահ կանուանենք՝ վեզիրութեան աստիճան բարձրացնելով։ Ադրիանուպօլսոյ կուսակալ Ասիմ փաշան ալ դատական դործոց նախարար կանուանենք։

«Ադրիանուպօլսոյ և Դանուբի կուսակալութիւններն այսօրուան օրս յատուկ կարեւորութիւն մ՚ունենալով, յաջողակ պաշտօնատարներ դնել հարկ էր անոնց վարչութեան դլուխն։ Այս պատճառաւ՝ մեր փարիզի դեսպան Սատիզ փաշան Դանուբի կուսակալ, Հէրսէքի նախորդ կուսակալ Ալի փաշան ալ Ադրիանուպօլսոյ կուսակալ կանուանենք։

«Նմանապէս առևտրական դործոց և երկրագործութեան նախարարութիւնը Պալայի՝ աստիճանաւ Պետական խորհրդոյ անդամ (ԶաՀիչ) Յովհաննէս էֆէնտիին կը յանձնենք, այդ մասին պէտք եղած հմտութիւնն ունենալուն համար։

«Կիրիտի կուսակալ Ահմէտ Մուխթար փաշան՝ Սամիհ փաշային տեղ չորրորդ բանակին հրամանատար կանուանենք, և Սամիհ փաշան ալ անոր տեղ Կիրիտի կուսակալ։

«Վարչութեան այլևայլ ճիւղերուն մէջ դործոց բարւոք մատակարարութիւնն ապահովելու միջոցներէն մին է յաջողակ և հմուտ խորհրդականներ (միւսթէշար) դնել մեր նախարարաց քով։ Մեր ելմտական դործոց բարւոքման համար՝ Եւրոպայէն սպասուած հմուտ ելմտադէտներու խորհրդակցութիւնն ստանալու որոշում տուած ենք արդէն։

«Հալէպի կուսակալ Խուրշիտ փաշան Եպարքոսութեան Միւսթէշար և Դայմագամաց ընտրութիւնն առաջարկելու պաշտօն ունեցող յանձնախումբին նախագահ կանուանենք։ Յիշեալ յանձնախումբը պիտի կազմուի այլևայլ նախարարութեանց միւսթէշարներէն և Պետական խորհրդոյ անդամներէ։

«Դանուբեան նահանգին նախորդ կուսակալ Բիֆաթ փաշան՝ Հալէպի կուսակալ կանուանենք։

«Վերերորդ շրջանակի թաղապետութեան նախագահ Բ. Աստուտէս փաշան ներքին դործոց նախարարութեան միւսթէշար կանուանենք։

«Կ. Պոլսոյ վերաքննիչ ատենին նախագահ (Սագըզ) Յովհաննէս էֆէնտին՝ հասարակաց կրթութեան նախարարի միւսթէշար կանուանենք։

«Գիտէք որ Երեսփոխանաց ժողովոյ նախագահին ընտրութեան ու անուանման համար Սահմանադրութեան 77 յօդուածին հաստատած ձևը դալ տարիէն սկսեալ պիտի դործադրի։ Սահմանադրութեան 35 յօդուածը կը տրամադրէ որ երեսփոխանաց թիւը ժողովրդեան թուոյն համեմատ պիտի որոշուի։

«Երեսփոխանաց ժողովոյն այս տարուան համար առժամանակեայ նախագահութիւնն, որ Սահմանադրութեան 19 յօդուածին մէջ յիշուած առժամանակեայ հրահանդին տրամադրութեանց համեմատ պիտի դործադրի, Ահմէտ Վէֆիկ էֆէնտիին կը յանձնուի, որոյ ուղղութիւնը, անկեղծութիւնն և երեսփոխանական վիճաբանութիւններն ուղղելու յաջողակութիւնն ամենուն ծանօթ են։

«Արևտրական դործոց նախորդ նախարար Հալէթ փաշան Մերակուտի ժողովին անդամ, և Եպարդոսութեան նախորդ միւսթէշար Սայիտ էֆ. Պետական խորհրդոյ անդամ [illegible]

«Գուղենք որ այս հրամաններուս դործադրութեան և տէրութեան դործոց բարւոք մատակարարութեան համար անմիջապէս դործի ձեռնարկէք։ Սահմանադրութենէն բղխած օրինաց ծրագրերն անյապաղ պատրաստել տաք, պարադայից պահանջած ամեն բարենորոգումները դործադրէք և հարկ եղած ամեն որոշումները ժամ յառաջ մեր բարձր հաւանութեան ներկայացնէք։

«Բարձրեալն Աստուած յաջողութիւն պարդևէ մեր ջանից»։

Կայսերական հրովարտակաւ, վեսիր. Ռէուֆ փաշան Պերութի կառավարիչ (դայմագամ) անուանեցաւ և վեսիր. Ղալիպ փաշան՝ Կ. Պոլսոյ վիլայէթին կառավարիչ կարդեցաւ։

—Կ. Պոլսոյ ԼԱ ԹԻԻՐԲԻ օրադիրն կը սէ թէ օդոս. Սուլթանն՝ օսմանեան երեսփոխանական ժողովոյն նախագահ անուանելով զվսե. Ահմէտ Վէֆիք էֆ. հետեւեալ խօսքով պատուեր է զնա։

«Բարեբաղդ կը համարիմ զիս նախագահ անուանելով զձեզ՝ ի վիճաբանութիւնս երեսփոխանաց ժողովոյն ըստ զօրութեան իմ դաշնադրական խարթին. վասնզի հասարակաց կարծիքն համամտութեամբ նշանակեաց զձեզիրբև ամենէն յաջողակ՝ ի կատարումն այս դործոյն։

—Ըստ թուրքերէն ՎԱԲԻԹ լրագրոյն, նախորդ Մեծ—Եպարդոս Միհրհատ փաշան հեռագրով խնդրեալ է՝ ի դերդաստանէ իրմէ, որ հոգ տանի յուղարկել նմա շուտով թարգման մի, հմուտ դաղղիական և իտալական լեզուաց։

—ԼՐԱԴԻՐ թերթին Յունվարի 26 թուոյն մէջ հետեւեալ լուրերն կընթեռնումք, զորս ուշադրութեան արժանի կը համարիմք։

«Կը լսեմք հաւաստի աղբիւրէ թէ՝ Օտեան էֆէնտին հեռագրաւ մայրաքաղաքս կանչուեր է, ճամբուն վրայ առանց Միհրհատ փաշայի հետ տեսակցելու։

«Նմանապէս կիմանամք վստահելի աղբիւրէ թէ՝ բարձրա. Աբրահամ փաշայն ալ վեհափառ Սուլթանին կողմանէ յատկապէս հեռագրաւ ի Պոլիս հրաւիրուեր է. սակայն փաշային որ ատեն ճամբայ ելնելը յայտնի և որոշուած չէ»։

Դաղղիարէն օրագրի մը մէջ հետեւեալ խորհրդածութիւնը կընթեռնումք.

«Երաշխաւորութիւններ տալով Եւրոպիոյ՝ ի մասին բարւոքման Թուրքիաբնակ քրիստոնեայ ժողովրդոց կացութեանը, օսմանեան կայսրութիւնն այս դործով աւելի ծանրակշիռ բարւոքումներ՝ ի ձեռս պիտի բերէ. քանզի որոշապէս և ամենէն նշանաւոր կերպիւ պիտի մտնէ Եւրոպական տէրութեանց միաբանութեան մէջ, և յայնժամ իրաւունք պիտի ունենայ պահանջելու, ՝ի նպաստ իւր, ամեն ապահովութիւնները առ՝ ի պահպանել թէ՝ ներկային և թէ ապագային մէջ, զքաղաքային անկախութիւնն և զվերհսկողութիւն իւր, որպէս և զամբողջութիւն երկրին իւրոյ։

«Բովանդակ Եւրոպիոյ օդուտն կը պահանջէ որ աշխարհիս խաղաղութիւնն ամէն օր չփոթուելու վտանգին մէջ չդտնուի Արևելքի մէջ. սակայն Թուրքիոյ օդուտն ամենէն աւելի և մեծ է. վասնորոյ ոչ ոք պիտի զարմանայ թէ խաղաղութեան դաշինքն ընելով, Բարձրա. Դուռն կամենայ տէրութեանց երաշխաւորութեան և արդարասիրութեան ներքև դնել զվիճակն իրաց, որում իւր հաւանութիւնն պիտի տայ»։

ւերակաց որպէս թադաւորեմ՚՚. և նորին կից երդքն «եթէ դու յորս հեծցիս յաղատ ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք. տարցին յաղատ ի վեր ի Մասիս. անդ կացցես և զլոյս մի՛ տեսցես՚՚։ Ընթերցիր նաև ի նոյն դիրս զվահագնի երգն. «երկներ երկին և երկիր. երկներ և ծիրանի ծով՚՚. և այլն։ Արդ, զայսոսիկ յօրինակ ի մէջ ածի առ ի ցուցանել թէ ոչ գոյին յայնժամառանձին լեզուք դաւառականք տարբերք ի դրոց լեզուէ։

Գ. Մեծի դիտողութեան արժանի է վերջին այն կարծիք Ա. ՄԱՄԼՈՅ, որ ասէ եթէ արդի աշխարհաբառն իցէ սերեալ ի կարծեցեալ դաւառական լեզուաց ոսկեդարուն։ Ի բաց առեալ մեր զկաղմութիւն բառից, զհոլովմունս անուանց և զխոնարհմունս բայից յաշխարհաբառին, որք յայտնի աղաւաղութիւնք են դրաբառին, ցուցանեմք եթէ յատկութիւն սոյն արդի լեզուիս, որ քերթողական առանձին ոճոյն զանազանի յոյժ ի դրաբառէն, է ի կազմութեան և ի դասաւորութեան բանից, ի համաձայնութիւնս բայից ընդ սուբոդեալեաց և առաւել ի դասաւորութիւնս յատկացուցչի ընդ յատկացեալսն։ Ի քննասիրել մեր զկանոնս քերականութեան մերոյ, դտանեմք ի մասին կազմութեան բանից, ճիշտ համեմատութիւն ընդ հին լեզուաց, յունականին ասեմ և լատինականին, հետեւապէս և միւս լեզուաց Եւրոպիոյ, յորս ի շարամանութեան բառից զմի և զնոյն ունին դասաւորութիւն. թէպէտև հայերէնն առաւելագոյն ազատութիւն վայելէ բայառութեամբք իւրովք։ Օրինակ առ այս բերցուք զհետեւեալ հատուած բանից դաղղիերէնին, և բաղդատեսցուք զայն ընդ Հայ թարգմանութեան. Comparez l'état des peuples du Paraquay, par cxemple, assemblés et civilisés par la religion, avec celui dans lequel ils avaiont vécu auparavant, et vous verrez ce qu'ils ont perdu. Համեմատեսջիք զվիճակ ժողովրդոց, օրինակ իմն համախմբելոց և քաղաքակրթելոց ի ձեռն կրօնի, ընդ այնմ յորում կեցեալ էին յառաջագոյն, և տեսջիք զոր ինչ նոքա կորուսին։ Զսոյն դասաւորութիւն բառից ունի ճիշտ և անվրէպ հին յունականն։ Իսկ աշխարհիկ լեզուն մեր, ներհակ այսմ ունի զկաղմութիւնն հակադարձ դրաբառին և արևմտեան լեզուաց. զի բերէ շրջուն հիւսուածով ի սոյն ոճ բանից. Բարակուայի մէկ տեղ հաւաքուած ու կրօնի միջոցով քաղաքակրթուած ժողովուրդներուն վիճակը՝ առջի աղրածնուն հետ համեմատեցէք և կորուսածնին կըտեսնէք։ Ուստի՞ իցէ, հարցանեմ, այսչափ հեռաւորութիւն ի մէջ արդի և հնոյ բարբառոյս։ Ի համեմատել մեր զաշխարհաբառն ընդ թրքերէնին, դտանեմք զթուական հիմնական փոփոխութեան նորին և զկաղապարն յորում ձուլեալ է այն, որով լուծանի տարակոյս մեր և ի ստուգութիւն անդր տակաւ մերձիմք։ Արդ, ի մէջ բերեալ աստէն զթարգմանութիւն վերոդրեալ պարբերութեանս ի լեզու թրքաց, և զուգակշռեալ ընդ աշխարհաբառին, դտանեմք զնոյն տիպ բանից ունել և ի վերայ թրքայի ոճոյ ձեւակերպեալ, այսպէս. «Բարակուանին ճէմօլան վէ մէսէպ վասիթասկլէ թէզարրիւֆ օլան ճէօմաթլէրին հալինի, էվվէլքի եաշատքլէրինէ բուպար էտին վէ դայիպ էթտիքլերինի կէօրիւրսիւնիւ՚՚։ Արդ, համեմատեսջիք և դուք զթարգմանութիւնս զայս ընդ աշխարհաբառին և դտջիք համատիպ և համապատկեր, որպէս լուսանկար ընդ իւրում նախատիպ։ Ապա ուրեմն աշխարհաբառն մեր առնու զդոյութիւն, զձև և զտարազ ի թրքաց լեզուէ. մինչև մասնիկս իսկ նորին, որպէս էր մասնիկն յոքնականացուցիչ, էվլէր, տըներ, պահճէլէր, պարտէղներ. ի տաճկերէնին մասնիկն սկսանի լ տառիւ, իսկ ի հայումն ն տառիւ, բաց ի միավանկ բառից։ Նոյնպէս էր մասնիկն ի վերջ ներկայ և անկատար բայից կցեալ, նոյն է էօր մասնիկն ի տաճկերէնին, կերթայ կոր, էրթէէօր, կըկարդար կոր, օգուսյոր իսկ։ Այսպէս և ի դիմաւոր դերբայս, տեսածնիս, էէօրթէ-յէ-մէշ, կարդացածնէդ, օգուսյոր-ղընըշան, լսածնուն պէս, էլթէ-թէ-էրի էլթի, որք ի դրաբառին այլազգ ունին ձևն. այսինքն զոր տեսաքս, կամ զոր տեսանեմքս, յանմանէ՝ զոր ընթեռնուքդ, ընդ լսել նոցա և այլն։

Այսոցիկ զհետ դայ ասել, թէ աշխարհաբառն մեր, ոչ եթէ ըստ Ա. ՄԱՄԼՈՅ՝ ժամանակակից է ոսկեդարուն, և է սերունդ դաւառական բարբառաց, զորոյ պնդէ լինել առ խորենացւով, այլ սկզբնաւորեալ է ի մեզ յետ արշաւանաց Հադարացւոց յաշխարհն Հայոց, և այլոց ազգաց մահմէտականաց, իբր յութերորդ դարու. այլ ոչ անմիջաբար փոխեցաւ խօսուն լեզու մեր և անկաւ ի շքեղութենէն և ի վսեմութենէ իւրմէ՝ այլ տակաւ դնացեալ՝ ուր ուրեմն դտանեմք առանձին բարբառ կազմեալ առ Ռուբինեան հարստութեամբ. և այն ոչ եթէ նոյն էր զոր այժմս խօսիմք, այլ այն՝ որ է ընդմէջ դրաբառին և աշխարհաբառին, որպիսի են հանելուկք և այլ քանի ինչ ռամկախառն խօսիւք յօրինեալքն դործք Շնորհալւոյն։

Ամիսիսեմ ասէն զդիտողութիւնս իմ, ցուցանելով եթէ յասել Խորենացւոյն հասարակ խօսք-ս, իմանի պարզ դրաբառն առանց սեթեւանայ։ Թէ ի ժամանակս նորին ոչ գոյին դաւառական բարբառք յորոց իցէ սերեալ արդի աշխարհաբառն, այլ զանազանէր և եթ ի լեզուս ուսումնական և ի լեզու ռամկական, որպէս և արդ իսկ մի և նոյն աշխարհաբառն զանազանի ըստ չափու հմտութեան խօսողին։ Եւ թէ՝ աշխարհիկ լեզու նմանողութիւն է տաճկական բարբառոյ ըստ ամենայն առման և ըստ ամենայն կանոնաց համաձայնութեան նոյն լեզուի, որպէս ցուցաք։

Յետ դիտողութեանցս, զորս յուսամք ողջմտութեամբ ընդունիլ ի Մամլոյն, յառաջեմ և ես ի մէջ խնդրոյս, որով ասպարէզ ընդարձակ բանայ նա առաջի բանասիրաց ազգիս, լուսեղէն կոչելովանդ զնախանձայոյզ ազգասիրացն խումբ և զգրագիտացն կաճառ, յորս խուն ինչ հան-

ԱԶԳԱՅԻՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Կրցաւիմք որ մեր նախընթաց թուով մոռացանք յիշատակելու զԱռաջնորդական ընտրութիւնն վիճակիս, որ քաղաքիս ազգային երեսփոխանական ժողովոյն միջոցաւ բարեյաջողկերպիւ տեղի ունեցաւ երկու շաբաթ յառաջ՝ ըստ տրամադրութեանց Սահմանադրութեան։

Ս. Երուսաղէմայ միաբան դերա. Մուրատեան տէր Մելքիսեդեկ ծայրագոյն վարդապետն՝ որ ուսումնական ու եւրոպական մի քանի լեզուաց հմուտ՝ խոհեմավայել եկեղեցական մի է, մեր երեսփոխանաց միաբան հաւանութեան քուէիւք Զմիւռնոյ վիճակին Առաջնորդ ընտրեցաւ։

Քաղաքիս գրեթէ բոլոր Հայ ժողովրդեան հետ ուրախ եմք և մեք այս բարեյաջող ընտրութեան վերայ, զի ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ է. և տարակոյս չունիմք թէ մեր նորընտիր հոգեւոր Հովիւն՝ իւր ազգասիրական խոհեմ և խաղաղասէր հովուութեամբը լիովին պիտի արդարացնէ զՀամակրական սէրն իւր հոգեւոր հօտին, որ արդէն անհամբերութեամբ կըսպասէ շնորհաբեր գալստեան նորա։

Կըլսեմք թէ Նորին Սրբութիւնն՝ վասն խնայութեան ծախուց 'ի ձախորդ ժամանակիս յայսմիկ, խնդրեալէ յազգային Վարչութենէ քաղաքիս՝ որ հրաւիրակք չյուղարկուին 'ի Կ. Պոլիս, խոստանալով փութալ գալ պարզ և անյուք կերպիւ և մխիթարել հոգեւորապէս զսիրեցեալ հոգեւոր հօտ իւր։

Այս եղելութիւնն՝ նոր ապացոյց մի կըհամարուի մեր նորընտիր Առաջնորդին քրիստոսական անփառասէր համեստութեանն, որ ևս առաւել գովութեանց արժանի է, զի 'ի հասակի երիտասարդութեան տեսանի։

ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆ ԶՄԻՒՌՆՈՅ

Երբ բարեպատեհ առիթ ունենամք, հաճութեամբ սրտի կըփութամք սոյն պատուական հաստատութեան վերայ խօսելու, որ կրնայ ոչ սակաւ պատիւ բերել քաղաքիս Հայ երիտասարդութեան։ ԱՐՇԱԼՈՒՍՈՑ նախընթաց թուով յիշեալ ընթերցատան անցեալ ամին եղեւմտից հաշուեցուցակին եզրակացութիւնն ծանուցանելով՝ և նորա կից յայտարարութիւնն հրատարակելով՝ այսպէս կըյաւելցնէինք.

«Այս յայտարարութենէն, նմանապէս յիշեալ հաստատութեան եկամտից գումարէն կըտեսնուի թէ Զմիւռնոյ Հայ Ընթերցատունն յաջող վիճակի մէջ չգտնուիր։ Այս եղելութիւնն ցաւալի է յոյժ, քանզի Զմիւռնաբակ Հայոց ազգասիրութեան և ուսումնասիրութեան պակասութիւնն կապացուցանէ"։

Կերևի թէ այս ճշմարիտ (թէև անհաճոյ) տողերն օգտակար տպաւորութիւն ըրած են մեր Հայ երիտասարդաց անձնասիրութեան վերայ. քանզի ուրախ սրտիւ կըտեսնեմք թէ բաղում եռանդեամբ և միաբանութեամբ ամեն հնարաւոր ջանք 'ի գործ կըդրուին՝ առ 'ի բարւոքել հիմնական կերպիւ և նախանձելի կացուցանել զայժմեան վիճակ Հայ Ընթերցատան։

Անցեալ տարւոյն տնօրէն Խորհուրդն, (որոյ ազգասիրական անխոնջ ջանքն շնորհակալութեան արժանի համարեցաւ), իւր հրաժեշտն արդէն տուած լինելով, նոր Խորհուրդ մի ընտրեցաւ, որոյ անդամքն են հետեւեալ պարոնայք։

Թագւոր Առաքելեան, ատենապետ
Վաղարշակ Կ. Ոսկանեան, դեր—ատենապետ
Յակոբ Զիվիճեան, ատենադպիր
Յակոբ Գ. Վէմեան, դեր. ատե. և գանձապետ
Խոսրով Ե. Պուռունաուզեան, } Թանգարանապետք։
Մկրտիչ Մ. Մարկոսոֆ, }

Սիրելի է մեզ յուսալ թէ այս ուսումնասէր երիտասարդ պարոնայց բարեխնամ ջանքն, յաջողութեամբ պիտի պսակուին 'ի յառաջադէմ զարգացումն Հայ Ընթերցատան։

Նորընտիր Խորհրդոյն տնօրէնութեամբն արդէն ատենախօսութիւն մի տեղի ունեցաւ յունցեալում շաբաթու վասն դեղեցիկ սեռին յիշեալ հաստատութեան մէջ, ուր 50ի չափ Հայ տիկնայք և օրիորդք կըգտնուէին։ Ատենախօսութիւնն հայագէտ անդղիացի տիկին մի էր՝ միս Վլիսթ անուն, որ անդղիարէնի դասատու է 'ի Հռիփսիմեանց ազգային վարժարանի քաղաքիս։ Յիշեալ քարոզիչ տիկնոջ ատենախօսութիւնն՝ աղջկանց դաստիարակութեան օգտից վերայ միայն էր, և որ սիրալիր ընդունելութիւն գտաւ։

Արանց համար ևս ատենախօսութիւնք պիտի լինին յետ այսորիկ, և կըլսեմք թէ պարոն Մ. Մամուրեան պատուելին՝ ըստ հրաւիրանաց տընօրէն Խորհրդոյն, արդէն խոստացեալէ սկիզբն տալ յիշեալ ատենախօսութեանց, որոց օգտակարութիւնն յայտնի է ամենուն։

Աղքատասիրաց ընկերութեան 'ի նպաստ ազգային կարօտելոց տուած պարահանդէսն, որ տեղի ունեցաւ անցեալ շաբաթի գիշեր, յուսացուածէն աւելի յաջողեցաւ։ Թուանց վաղեմի քաղինոն՝ որ մեր ազգին կըվերաբերի, լեցուն էր ազգային և օտարազգի ընտրելագոյն և վայելչազարդ ընտանեօք, որք զբոլոր գիշերն զուարճալի զբօսանօք անցուցին և զանազան աղնիւ մեծարանօք պատուասիրեցան 'ի կողմանէ մեծաւ. անդամոց Աղքատասիրաց ընկերութեան և ուրիշ համազգի վերակացու երիտասարդաց, որոց ազգասիրական բարեյաջող ջանիւքն ոչ միայն յիշեալ պարահանդէսն արժանաւոր և յոյժ վայելուչ կերպիւ 'ի գործ դրուեցաւ և պատուեցաւ ներկայութեամբ մեր վսե. Վալիին, այլև հարիւր օս. լիռայէն(1) աւելի արդիւնք գոյացան 'ի մխիթարութիւն ազգային կարօտ ընտանեաց 'ի բարեկենդանի աւուրս։

Քաղաքիս յունարէն օրագիրն՝ ՆԷԱ ՍՄԻՐՆԻ անուն, այս ազգասիրական պարահանդիսին յաջող ելքն յառաջ բերելով՝ այսպէս կ'յաւելու՝

«Խնդակից լինելով մեր քաղաքակից Հայոց ի վերայ այս յաջողութեան, կըյուսամք թէ դատարկ խօսքով միայն մեծամեծս չարդող համազգիք մեր պիտի իմանան թէ միաբան ջանքն և ընդհանուր բարի կամեցողութիւնն ինչ նշանաւոր յաջողութիւն կրնան 'ի ձեռս բերել"։

(1) Պարահանդիսին մտից տոմսակին արժէքն մէկ օս. լիռա էր եւ միայն ընտիր ընտանեաց կըտրուեր։

դուցեալ իցէ հոգին Մեսրովբայ դիմագրաւ լինել ի ճակատու ընդդէմ այնոցիկ որ մեռեալ համարին զազգն իւրեանց. և կարի իսկ քաջ. զի զինչ արդեօք ենթադրիցէ մեռելութիւն լեզուի, եթէ ոչ նոյն իսկ զժողովրդեանն՝ որ զայն խօսիցի։ Ապա ուրեմն մէն մի դերեզման համարիցի ազգային լեզուիս, ըստ Ա. ՄԱՄԼՈՑ, եկեղեցիքն յորս և եթէ պաշտի դրաբառն. վասն այնորիկ զի մի՛ և դպրոցք զկերպարանս առնուցուն դերեզմանաց, և ինքեանք դասատուք և տնօրէնք ի մեռելոյթս զբազիցեն, տակաւ դնացեալ աշխատին բառնալ և անտի, և ի վերին երրեակ դասարանս հաղիւ ուրեմն շնորհեն նմա առնել մուտ և այն առ փոքր մի ժամանակ և եթէ. քանզի ի պակասել յետ ժամանակի հայկարան դասատուաց ինքնին խափանեսցի իսպառ և դասախօսութիւն գրաբառին։ Քանի՛ ամօթ մեծ համարիցի արդեօք ջատագովիցն աշխարհաբառին ի տեսանել զնւրոպացի հայագէտս ի նոյն լեզու զոր նոքա մեռեալ համարին, խօսել և գրել, անպէտ և ոչինչ վարկանելով զաշխարհիկ լեզուն, զոր միայն կենդանի դնեն ռամկախօսքն մեր, կարծիս իմն տալով զանձանց անհմուտ դալ այնմ. և առ ի ծածկել զթերութիւն իւրեանց, ջանադիր լինին ի մահ դատապարտել զնոյն, որով ոչ առնուն ի միտ՝ եթէ այնու սպանանեն զոդին ազգայնութեան, եղծանեն զպատիւ և զպարծանս ազգային դրականութեան, և դնեն զազգ մեր ի չարս ազգաց խուժաստանեայց, և կովկասայնոց, որոց չիք ոչ դպրութիւն և ոչ իսօսից աղնութիւն։ Ի դրաբառ լեզուի մերում աւանդեալք պահին որ ինչ կրօնիս մերոյ հաստատութիւնք. անդդանձեալ կան որբազան աւանդք եկեղեցւոյս Հայաստանեայց ողջամիտ վարդապետութեան, և համայն ասել՝ ի նմա է վսեմութիւն լեզուիս, որով համարիմք ազգ հին և մերձաւոր քաղաքակրթեալ ազանց հնոց և նորոց. իսկ աշխարհաբառ լեզուաւ մերով հաւասարիմք արևելեան անշուք ազգաց աննշանից։

թիւր կարծիք են զակատելոց զհետ աշխարհաբառին՝ համարել զնոր լեզուն ընդարձակագոյն, և կամ ըստ նոցա բառիցն՝ ճկուն և տարածուն իցէ ի մեկնութիւնս և ի բացատրութիւնս դաղափարաց. և այս կարծիք նոցա թերևս արդարասցի այնու՝ զի զուրկ դոլով աշխարհաբառին ի կանոնաց, ազատութիւն է բանախօսաց ըստ կամի իւրեանց արշաւել, և զբանս իւրեանց յերիւրել արտաքոյ սահմանաց լեզուիս։ Զոր օրինակ ծարա-ը գոհ ընել. (Մամ. յեր. 418), փոխանակ ասելոյ ծարա-ը յագեցընել կամ մարել. և այս բան որչափ սխալ համարի ի գրաբառին, այնչափ անտարբեր գտանի ի բարբառն աշխարհիկ։ Այսպէս իմա և ի կազմութեան բարդ և ածանցական բառից, զորօրինակ ասել դասապո-էի (անդ 410), հակառակ կանոնաց բարդութեան լեզուիս. փոխանակ գրելոյ դասապոո-էի. և զի այս խորթ և դժուար հնչումն է, ապա հարկ է ասել վարժուհի և կամ դասատուօրիորդ։ Անթիւ են այս օրինակ բարդութիւնք բառից ի Մամուլն, յորս բազմիցս թլփատեալ յապաւին բաղաձայն տառք ընդդէմ կանոնաց. զորօրինակ ասելանյնո-էր, աշխարհանդէս փոխանակ գրելոյ անյնանո-էր աշխարհահանդէս, և այլն, յորս նշմարի ջանք և նպատակ կարճելոյ զբառս և անդղիացուցանելոյ զլեզուն. վասնորոյ բառնան և զանցողական մասնիկն ի բայից և գրեն ներկայել, պէել, ամօրել, փոխանակ ներկայացընել, պէացընել, ամՁՁընել։ Ո՛ւր թողցուք և զամբողջ հատած բանից որ վատահացեալ ի ճկուն և ի պարծուն ոճ աշխարհաբառին անխափար ի մէջ բերեն առանց պարզ և յատակ իմաստ ինչ պարունակելոյ. զոր օրինակ այս բան «Հաղորդակցութիւնք կարելիութիւնը կըկազմէ լեզուին միութիւնը, ինչպէս է նաև աշխարհաբառի միութիւնը՝ որմէ զուրկ է լիովին գրաբառը, որ հայկաբաններու համար միայն հպելի է և մի"։ (անդ 418)։ Մթին են բանքս, չէ յայտ թէ կարելիութիւն հաղորդակցութեանն կազմէ զմիութիւն լեզուին, թէ միութիւն լեզուին կազմէ զկարելիութիւն հաղորդակցութեան. հրաշալի՛ բարբառ. այսու անկանոն լեզուաւ դիմիրդ մարթի իցէ լինել հաղորդակցութիւն դաղափարաց. Մամլոյ միայն է այս լեզու հպելի։ Դարձեալ, միութիւն աշխարհաբառի ասելով զի՞նչ արդեօք իմանայ, թերևս զմի ձև և զմի ահսակ բարբառ, թերևս զդաւառական զայլ և այլ բարբառսն, զորոց ասաց լինել սերունդ յաւուրց Խորենացւոյն, մեք ընդհակառակն բազմաձի և բազմադի իմանամք զաշխարհիկն, իւրաքանչիւր դաւառի, քաղաքի և գեղջ այլևայլ լինել լեզու. մինչև ոչ իմանալ միոյ քաղաքի ժողովրդեան զայլոյ քաղաքի մարդկան զխօսս։ Զայս հաստատէր և ինքն Մամուլն (յեր. 365. Հոկտ.) ընդդէմ ՓՈՐՁ հանդիսի յասելն՝ «ռուսիաբնակ Հայք կրնան օգնել մեզ՝ եթէ միայն քիչ մ'ևս լեզուաւ մեզի մօտենան"։ որով ցուցանէ թէ չիք միութիւն ի բարբառս տաճկաբնակ և ռուսիաբնակ Հայոց։ Մեք դիտեմք զի մի է գրաբառն, զմի ունելով հիմն և զծագումն, որոշեալ և եթի ի պարզև ի պերճ ասացուածս։

Բազմիցս է հանդիպել մեզ ի գրուածս ռամկախօս բանագիտաց կրճատ բառից և մասնկաց որյեցեալ ի յարակից բառ ինչ և միացեալ ընդ նմա ապաթարցիւ ի հագադ, հնչումն իմն գործէ ձայնի որ խոցէ զհամեստ լսելիս ծնկասէր օրիորդաց։ Ո՞չ ահա այս ամենայն անպատեհութիւնք և խրթնութիւնք ծագին յանկանոնութենէ աշխարհաբառին, և ո՞չ նախապատիւ համարելի է զպարզ գրաբառն, գոնէ յուսումնական և ի բանասիրական հանդէս, թողեալ զաշխարհիկն ի հաճոյս խմբագրաց որք յանձին կալեալ են հաղորդել հասարակ ժողովրդեան զառօրեայ լուրս և զքաղաքական դէպս և զընթացս տուրևառիկ շահուց, որք չեն ինչ կարևոր ազգային լեզուի յառաջադիմութեան։ Իսկ եթէ ոչ զայս, և եթէ անբաւականք և անհմուտք իցեն քերթողական լեզուիս, զոր անսուտ համարիմ, գոնէ ըստ խորենացւոյն՝ հասարակաց խօսիւք վարեսցին, և մի՛ ճամարտակեսցեն։

—Զմիւռնոյ ԼԱ ՐԷՖՈՐՄ դաղղիարէն լրագրոյն ամսոյս 1—13 թուոյն մէջ Աղքատասիրաց ընկերութեան տուած պարահանդիսին աղգանպաստ դեղեցիկ նկարագրութիւնն ընթեռնլով, չեմք կրնար չգովել նոյն պատուական թերթին խմբագիր—տնօրէն մեծարգոյ մսիւ Ս. Ոսկանեան երևելի գրագէտին ազգասիրական ղդացմունքն և դաղղիական զմայլելի ազդու դրիչն՝ որ կը-դերազանցէ նոյն իսկ բուն դաղղիացի խմբագրացը, որով ոչ սակաւ պատիւ կընէ ընդհանուր ազգին և մասնաւորապէս Զմիւռնաբնակ Հայոցս. որոց համակրական սէրն իրաւամբ 'ի ձեռս բերած է. քանզի ամեն բարեպատեհ առթիւ՝ մեր քաղաքակից հայկազուն ուսումնականն պատրաստ է իւր թերթուվն պաշտպանել զիրաւունս ազգին և 'ի նպաստ նորա գործածել զպատուական դրիչ իւր։

—Թէև Միթհատ փաշային անկմամբը հետևեալ բարեյաջող լուրը (զոր ԼՐԱԳԻՐ թերթին Յունվար 21 թիւէն կը քաղեմք) կորուսեալ է դծանրակշռութիւն իւր, բայց և այնպէս սրժան կը համարիմք հաղորդել զայն մեր ընթերցողաց իբրև պարզ տեղեկութիւն մի։

«Ստոյգ աղբիւրէ կիմանամք թէ՝ Ս. Պատրիարքին խնդրանացը վրայ, Մեծ—Եպարգոս Միթհատ փաշա միջնորդելով հեռագիր զարկեր է Փարիզ Նուպար փաշայի, որ խասգիւղի մէջ իր անուամբն ու ծախիւքը կառուցեալ Շահնազարեան դիշերօթիկ վարժարանը, որ դոց կը մնայ, վերստին բանալու համար հաճի հարկ եղած միջոցները շնորհել։ Կը հաւաստեն թէ Նուպար փաշա ալ առ այս՝ հաւանութեան դոհացուցիչ պատասխան մը հաղորդեր է Մեծ—Եպարգոսին»։

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Զմիւռնիա, 5 Փետրվար։

Հինգշաբթի առաւօտուն մեր նաւահանգիստին մէջ մաքսատան մօտ յոյն անձի մը դիակը գտնուեցաւ, որ կոտաւ կը վաճառէր 'ի փողոց։

—Մեծարգոյ մսիւ Հոլմս, որ իւր դիւանագիտական տեղեկագրութեամբ առ կառավարութիւն իւր՝ արժանապէս ծանուցեալէ, հիւպատոս անուանեցաւ քաղաքիս Անդղիոյ հիւպատոսարանին՝ փոխանակ հանգուցեալ միստր Փէմպերպէյի։ Իսկ փոխ հիւպատոս միստր Սթիֆինս Ճոլի, որ յոյժ դժուար պարագայից մէջ բարենախանձ ոգւով կառավարեց Զմիւռնոյ Անդղիոյ հիւպատոսարանը, Սուրիոյ դիմաւոր քաղաքի մը մէջ հիւպատոս պիտի կարգուի։

—Զորեքշաբթի դիշերէն սկսեալ Հիւսիսային արևմտեան հովը սաստկապէս փչելով՝ ահագին փոթորիկ մի տեղի ունեցաւ հանդերձ ձիւնաբեր անձրևով, որ կարճ և թեթև ընդհատութեամբ տևեց մինչև հինդշաբթի երեկոյ՝ և ջուրերն սառեցոյց դիշերն, ոչ սակաւ վնասներ պատճառելով մեր նաւահանգստին մէջ, ուր 4 փոքրիկ նաւք, 4 մառնա և 13 նաւակք զոհ եղան այս սաստիկ ալէկոծութեան։

Երէկուանէ 'ի վեր օդը պարզ՝ հովը ուժգինէ. բայց ցերեկն ցուրան սաստիկ չէ վասն ճառագայթափայլարևուն և Սանթիկրատ Ջերմաչափն 10 աստիճան կը նշանակէ զրոյին վրայ։

—Այս շաբթու մեծկակ դողութիւն մի եղև 'ի Յունական թաղն 'ի վնաս ևրոպացի վաճառականի մը, որոյ դրատունն բանալով դողերն, և երկաթէ արկղն կոտրելով՝ բաւական դրամ վերցուցին։ Բարեբաղդաբար ոստիկանութիւնն յայտնեցաւ ձեռք ձգել այս դողերէն մէկը։

—Քիր Նի. Վրաւարիտի յոյն վաճառականն քաղաքիս՝ 'ի նպաստ իւր ազգային մնտուկին՝ որ շատ նեղ վիճակի մէջ կը գտնուի, տարեկան հարիւր արծաթ մէճիտ որոշեց, և վասն ներկայ տարւոյս կանխիկ վճարեց զայս գումարն։

ՆԷԱ ՍՄԻՐՆԻ օրագիրն՝ յորմէ կը քաղեմք այս լուրը. բաղում դովութեամբ կը յիշատակէ զազգասիրական զայս նուէր, ծանր կերպիւ յանդիմանելով զմեծահարուստ համազգիս իւր՝ որք անտարբեր կը մնան իրենց ազգային նեղութեանց առջև։

—Կը հաւաստեն թէ Միթհատ փաշան Պրինտիսիէն 'ի Վէնետիկ և 'ի Փարիզ պիտի երթայ։

ցին ի պերճաբանութիւն հատեալ և իմաստասիրել այնու կարծեցեալ. զի լաւ է իսպառ լռել՝ քան խօսել և մնալ անիմանալի. որպէս այս բան ի Մատնեն (յեր. 400). «Դիւրին է սեմական և քամական սերունդն արհամարհել. բայց ասոնց հասակին դոնէ պէտք է հասնիլ և ապագային հորիզոնին և ստուերներուն մէջ կենաց նշոյլ մը նշմարել զոր յոյս կ'անուանեն»։ Ի սմա թէպէտև ի հեռուստ բացուստ նշմարի գոլ գաղափար ինչ ընդ այլասացիկ իմաստիւք, այլ այնչափ նրբին և անբմբռնելի, մինչև անգայտանալ իսպառ և անհետել, և մնալ անհաղորդակցելի այնոցիկ ընթերցողաց, որք չեն արժանացեալ միում ի վերին երբեակ դասարանաց դպրոցին. և ուսեալ՝ թէ զինչ իցէ այլասացութիւնք և զինչ փոխակերպութիւնք բառից և բանից, որոց դիտութիւն՝ զայդ ընդ դրաբառին վարդապետութեան համարի յաչս ռամկախօսաց մերոց՝ կորուստ ժամանակի։

Եհ, օն անդր. ի բաց տար զկարծիսդ որ ըզռամկաց և զսինլքորաց և եթ կարէ զմիտս կախարդել և զհամոզանս նոցին մոգել ընդ թիւր նախադատութիւնդ։ Եթէ կորուստ ժամանակի իցէ ուսումն դրաբառին, քանի՞օն առաւել կորուստ մեծ իցէ և անդարմանելի տարապարտ ուսումն աշխարհաբառին, որոյ չդուցէ միօրինակ քերականութիւն. քանզի չդոն և ոչ միօրինակ կանոնք, այլ իւրաքանչիւր ռամկախօս դրագիտաց, (եթէ ներելի իցէ ինձ ի սոյն անուն կոչել զնոսա առանց վիրաւորելոյ զզգացումն ճշմարիտ դրագիտաց տղդիս), կախեալ կան ըզկամաց և զբմածին հաճոյից կանոնս սահմանել և ի նոսա սահմանափակել զլեզուն թրքահայ։ Հարցանեմ զԱ. ՄԱՄՈՒԷՆ և զհամակարծիսն իւր, ուստի՞ ուսան զհրաշալի աշխարհաբառն, յոր բարբառ առեալ ածին յեղին զօտար ազգաց զվէպս և զառասպելաբանութիւնս ի նախատինս դրականութեան սրբազան լեզուիս. ո՞չ ապաքէն են և ինքնադէտք. արդ լեզու զոր դիտական տեղեկագրութեամբք առ կառավարութիւն իւր՝ արժանապէս ծանուցեալէ, հիւպատոս անուանեցաւ քաղաքիս Անդղիոյ հիւպատոսարանին՝ փոխանակ հանգուցեալ միստր Փէմպերպէյի։ Իսկ փոխ հիւպատոս միստր Սթիֆինս Ճոլի, որ յոյժ դժուար պարագայից մէջ բարենախանձ ոգւով կառավարեց Զմիւռնոյ Անդղիոյ հիւպատոսարանը, Սուրիոյ դիմաւոր քաղաքի մը մէջ հիւպատոս պիտի կարգուի։

—Զորեքշաբթի դիշերէն սկսեալ Հիւսիսային արևմտեան հովը սաստկապէս փչելով՝ ահագին փոթորիկ մի տեղի ունեցաւ հանդերձ ձիւնաբեր անձրևով, որ կարճ և թեթև ընդհատութեամբք տևեց մինչև հինդշաբթի երեկոյ՝ և ջուրերն սառեցոյց դիշերն, ոչ սակաւ վնասներ պատճառելով մեր նաւահանգստին մէջ, ուր 4 փոքրիկ նաւք, 4 մառնա և 13 նաւակք զոհ եղան այս սաստիկ ալէկոծութեան։

Երէկուանէ 'ի վեր օդը պարզ՝ հովը ուժգինէ. բայց ցերեկն ցուրան սաստիկ չէ վասն ճառագայթափայլարևուն և Սանթիկրատ Ջերմաչափն 10 աստիճան կը նշանակէ զրոյին վրայ։

—Այս շաբթու մեծկակ դողութիւն մի եղև 'ի Յունական թաղն 'ի վնաս ևրոպացի վաճառականի մը, որոյ դրատունն բանալով դողերն, և երկաթէ արկղն կոտրելով՝ բաւական դրամ վերցուցին։ Բարեբաղդաբար ոստիկանութիւնն յայտնեցաւ ձեռք ձգել այս դողերէն մէկը։

—Քիր Նի. Վրաւարիտի յոյն վաճառականն քաղաքիս՝ 'ի նպաստ իւր ազգային մնտուկին՝ որ շատ նեղ վիճակի մէջ կը գտնուի, տարեկան հարիւր արծաթ մէճիտ որոշեց, և վասն ներկայ տարւոյս կանխիկ վճարեց զայս գումարն։

ՆԷԱ ՍՄԻՐՆԻ օրագիրն՝ յորմէ կը քաղեմք այս լուրը. բաղում դովութեամբ կը յիշատակէ զազգասիրական զայս նուէր, ծանր կերպիւ յանդիմանելով զմեծահարուստ համազգիս իւր՝ որք անտարբեր կը մնան իրենց ազգային նեղութեանց առջև։

—Կը հաւաստեն թէ Միթհատ փաշան Պրինտիսիէն 'ի Վէնետիկ և 'ի Փարիզ պիտի երթայ։

մարթ է ինքնին ուսանել, ոչ ապաքէն կորուստ ժամանակի համարի աւանդել զնոյն ի դպրոցս։ Ուստ զդրաբառն, ուսցին համբակք ինքնին և զաշխարհաբառն առ ի կիրարութիւն ընտանեկան հաղորդակցութեան և ի դիւրութիւն աշխարհավարութեան. իսկ զդրաբառն արկցեն ի կիր ի դրաւոր հաղորդակցութիւնս, յուսումնական ճառս և ի դասական ասացուածս բանից, մանաւանդ ի մատենադրութեան։ Եթէ ի սոյն լեզու խորենեան աշխատեալէր ՄԱՄՈՒԷՆ Զմիւռնոյ, յեղուլ զվեպասանութիւնսն դաղղիերէն լեզուի, բաղմապսակ քան զոր չունին այժմ, ստանային զյարդ և զվարկ և լինէին նոքա ի ձեռս համբակաց արհեստ ուղղախօսութեան և օրինակ հետևողութեան, և ընթերցումն նոցա վերակրկնէր միշտ որպէս զգիրս պատմութեան խորենացւոյն, և մեղմանայր թերևս թելադրութիւն նոցին սիրատենչ զգացմանցն և սեռական խստղանաց ի սիրաս նորահաս ընթերցուհեաց. և բարոյականութիւնն, որով ասի օծեալ յիշեալ վեպքն, չհամարիցի որպէս շղաշատեռ նրբահիւս և թավանցիկ զերեսօք դեղադէշ իսլամուհւոյ, որով առաւելու նորին փայլ և դեղ ի կախարդել զսիրասուր տեսութիւն աչաց սիրավառ պարմանւոյն։

Վախճան տամ դիտողութեանց՝ յայտ արարեալ և զայս, զի մի՝ ոք ստգտանիցէ զիս վասն ի՛ կիր առնլոյ իմ աստէն զլեզու մեռեալ և ոչ զկենդանի ցուցանել կամելով՝ եթէ առիւծն յետ դադարելոյ իսկ ի կենդանութենէ, կարող է զբազումս ի չորքոտանեաց հարուածել։ Ակն ունիմ եթէ ընթերցողք ոչ ի կարծ դատիցեն զբանս և ոչ ընդ ակն խոցիցին. վստահ լինելով ընդ անկեղծութիւնն իմ և ընդ բարեմտութիւն, զոր հաւաստեմ և խմբագրութեան պատուական ԱՐՇԱԼՈՒՍՈՑԴ, խնդրելով ընդունել զայսոսիկ բանս իմ և տալ ի հրատարակութիւն եթէ արժան դատիցիք։

Տ. Հ. Թ. ՍԱՀԱԼԱՆԵԱՆՑ

—Ի յիշատակ Վարդանանց զօրավարաց հինգշաբթի օրն ազգային դեղեցիկ հանդէս մի կատարեցաւ 'ի Մեսրոպեան վարժարանի քաղաքիս, ուր 'ի ներկայութեան բազմաթիւ ժողովրդեան՝ պարագայիս յարմար ճառախօսութիւնք եղեր են թէ դրաբառ և թէ աշխարհաբառ լեզուաւ։

—Հեռագիրն կը ծանուցանէ թէ Սերվիոյ նախարարն մսիւ Խրիսթիչ՝ ամսոյս 3ին Պելկրատէն մեկներ է 'ի Պոլիս երթալու։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամպակէն այս շաբթու գրեթէ 3000 հակ վաճառեցաւ, 360—367 1/2 առ կենդինարն մեքենայով մաքրուածք, 355 ղուրուշի չքքրքք, և 345 Աստանայի բամպակք։

Աֆիոնին գիներն միևնոյնն են՝ ինչպէս որ նշանակած եմք մեր նախընթաց թուով, սակայն 'ի հանգարտութեան գտանի, և այս շաբթու ամենևին վաճառում մի չեղաւ. առ այժմ 'ի շուկայի մերում եղեալ պատրաստ աֆիոնն հաշիւ թէ 900 կողովի կը հասնի։

Փալամուտը դիւրավաճառ է միշտ և այս շաբթուան եղեալ վաճառումնքն 10,000 կենդինարի կը հասնի, Անդղիոյ տեսակ՝ որ վաճառեցաւ 135—140 ղուրուշի առ կենդինարն։

Ճէհրիէն 150 քուրձ վաճառեցաւ յայսմ եօթնեկի 'ի դին 6 ղուրուշ 10 փարայի օխան։

ՓԱՆՈՒՅՈՒՄ

Հայազգի ճարտար պատկերահան մը, Ռափայէլ Վարժապետեան, որ մօտերս Կ. Պոլսեն Զմիւռնիա հասած է, կը ծանուցանէ Հայ հասարակութեան որ ամեն տեսակ թէ՛ ազգային, թէ՛ անդրազգային, եւ թէ՛ բնական իւղաներկ ընտիր պատկերներ գծելու պատրաստ է։ Ասկէ զատ լուսանկարի վրայէ մաքուր, եւ ճշդանման կենդանագրեր ալ կրնայ։

Արժեքի մասին դիւրագին, մանաւանդ մասնաւորապէս իւր կենդանագիրը որեւիցէ դրուքեամբ գծել տալ փափաքողին դիւրամատչելի ըլլալով, ուզողը կրնայ Արշալուսոյ տպարանը, եւ Յ. Կ. Սվաճեանի դիմելով ամեն կերպ տեղեկութիւն ստանալ։

ԵԼԷԿՏՐԱԿԱՆ ԶԱՆԳԱԿ

Զոր կրկարգադրէ եւ կը վաճառէ մօսիւ Ն. Կրեքովիչ կատարելագործեալ տեսակեն։ Սիմիայն զանգակ (սօնրրի) բաւական է ամենամեծ տանց։ Յուցանող ասեղն իսկոյն կը նշանակէ զսենեակն յորմէ մեկնած է զանգակին ձայնը։ Հին դրուքեամբ զանգակ եւս ունի, որոյ շարժումն արագ եւ կատարելագործեալ է։ Այս զանգակը՝ ինչպէս նաեւ ելէքտրական զանգակը՝ երաշխաւորեալ է իբրեւ լաւ վստահ երից ամաց տեւողութեան։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբաթը անգամ մը՝ շաբաթ օրը կը հրատարակուի։ Տարեկան գինը 120 ղուրուշ է ողջ դրամով, կանխիկ վճարելի։ Դուրս երթալու լրագրոյ ճանապարհի ծախքը՝ առնողին վերայ է։ Ով որ կուզէ, կրնայ բաժանորդ գրուիլ Զմիւռնիա՝ Արշալուսոյ գրատունը. իսկ ուրիշ քաղաքաց համար, ահա կը նշանակեմք լրագրոյս մեծարգոյ գործակալաց անուանքը, որք են.

Կոստանդնուպոլիս՝ Հ. Ս. Ալաճաճեան էֆէնտի, Տնօրէն և Տէր Փունջ լրագրոյն։

Ալէքսանդրիա՝ աղա Մկրտիչ Հալէպլեան։

Գահիրէ՝ Իսկէնտէր աղա Մելիքեան։

Յոպպէ՝ աղա Սիմոն Ս. Մուրատեան, փոխ—հիւպատոս Գերմանիոյ։

Ռէդերսպուրկ՝ Խաչատուր սարկաւագ Խանթարճեան

Մոսկուա՝ պարոն Զարմայր Մսերեանց։

Հալէպ՝ Տ. Իսահակ քահանայ Շահվէքիլեան։

Պաղտատ՝ Անդղիոյ հիւպատոսի փոխանորդ, աղա Միքայէլ մահտեսի Մինասեան։

Կալկաթա՝ պարոն Մ. Խ. Յովակիմեան։

Մատրաս՝ պարոն Անդրէաս Յամ։

Պաղավիա՝ պարոն Մանուկ Որդանանեան։

Խմբագիր—տէր լրագրոյս,

Գ.—Լ.— Գ. Պալէրաշեան։

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՑ Ա.ԲԱ.ՐԱՏԵԱՆ